Ավետիք Իսահակյան

Ա՜խ, անհուն սեր ես ունեի սրտիս մեջ

Ա՜խ, անհուն սեր ես ունեի սրտիս մեջ,
Եվ վառ հավատ, ու բյուր հույսեր ունեի,
Բարձրաթռիչ, ինչպես արծիվ վեհափառ,
Կըսուրայի զառ թևերովս երկնի մեջ.

Ես ունեի չքնաղ ցնորք իմ հոգում,
Կըսիգայի մարդկանցից վե՞ր, երկրից վե՞ր.
Սավառնաթև, ինչպես արծիվ սևաթույր,
Շքեղ ցնորք ես ունեի իմ հոգում.

Բայց ցնորքս մնաց մենակ կյանքիս մեջ, -
Քանզի մարդիկ, որ դժմիտ են ու դաժան,
Խորտակեցին, հոշոտեցին իմ սիրտը
Եվ ցնորքը սոսկ թողին ինձ կյանքի մեջ…

1899